



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Հնդունվել է 26.12.2008

- [Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ](#)
- [Գլուխ 2. Համահայկական բանկի գործունեությունը](#)
- [Գլուխ 3. Համահայկական բանկի կառավարումը և ղեկավարները](#)
- [Գլուխ 4. Գործունեության իրավական կարգավորումը և վերահսկողությունը](#)
- [Գլուխ 5. Անցումային դրույթներ](#)

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Համահայկական բանկի ստեղծման և գործունեության կարգը և պայմանները, գործունեության սկզբունքները, կառավարման մարմինների ձևավորման և գործունեության կարգը, Համահայկական բանկի կարգավորման և վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև Համահայկական բանկի գործունեության հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Համահայկական բանկի կարգավիճակը

1. Համահայկական բանկը բաց բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվում է սույն օրենքի հիման վրա:
2. Համահայկական բանկի գործունեությունը կարգավորվում է բանկերի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:
3. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Համահայկական բանկի ընդհանուր կապիտալը, հիմնադիրները և մասնակիցները

1. Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի չափը պետք է լինի Հայաստանի Հանրապետության տարածքում նոր ստեղծվող բանկի համար սահմանված ընդհանուր կապիտալի չափից ոչ պակաս:
2. Համահայկական բանկի հիմնադիրներից է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կամ Հայաստանի Հանրապետությունը: Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության՝ որպես Համահայկական բանկի հիմնադիրների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Համահայկական բանկի հիմնադիր կամ մասնակից կարող են լինել նաև քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտներ:

Հոդված 4. Համահայկական բանկի գործունեության սկզբունքները

1. Համահայկական բանկը բաժնետիրական ընկերություն է, որը գործում է մասնավոր և պետական համագործակցության հիման վրա:
2. Համահայկական բանկը գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ Հայաստանի Հանրապետության տարածքում չմրցելու սկզբունքով:

Հոդված 5. «Համահայկական բանկ» բառակապակցության և «Համահայկական» բառի օգտագործումը

1. «Համահայկական բանկ» բառակապակցությունն իր անվանման մեջ կարող են օգտագործել բացառապես սույն օրենքի հիման վրա հիմնադրված կազմակերպությունը, դրա մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկերը չեն կարող իրենց անվանման մեջ օգտագործել «Համահայկական» բառը կամ դրա թարգմանություններն ու ածանցյալները:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 6. Համահայկական բանկի նպատակն ու գործառնությունները

1. Համահայկական բանկի նպատակն է նպաստել ուժեղ, մրցունակ եւ գիտելիքի վրա հիմնված հայության ներուժի ձեւավորմանը եւ այն ուղղել ամբողջ հայության մրցունակության ավելացմանը համաշխարհային շուկայում:

2. Համահայկական բանկն իր գործունեությունն իրականացնում է լիազոր մարմնի ռազմավարության ներքո:

3. Համահայկական բանկն իրականացնում է բանկերին բնորոշ գործառնությունները, բացի ռեզիդենտներից հրապարակային առաջարկի միջոցով միջոցներ ներգրավելուց: Ռեզիդենտ հասկացությունը կիրառվում է ըստ «Արժույթային կարգավորման եւ արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված նշանակությամբ:

Հոդված 7. Լիազոր մարմինը եւ Համահայկական բանկի գործունեության ծրագիրն ու հաշվետվությունը

1. Լիազոր մարմինը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Լիազոր մարմնի կազմավորման եւ գործունեության կարգը, ինչպես նաեւ խնդիրները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Համահայկական բանկը գործունեության ծրագիր կազմելիս առաջնորդվում է լիազոր մարմնի ռազմավարությամբ:

3. Համահայկական բանկն ամեն տարի կազմում եւ մինչեւ տվյալ տարվա նոյեմբերի 1-ը լիազոր մարմին է ներկայացնում Համահայկական բանկի խորհրդի հաստատած՝ Համահայկական բանկի հաջորդ տարվա ներդրումային գործունեության տարեկան ծրագիրը, որը պետք է համապատասխանի լիազոր մարմնի ռազմավարությանը: Սույն մասով սահմանված ժամկետը չի տարածվում Համահայկական բանկի գործունեության առաջին տարվա ներդրումային գործունեության ծրագրի վրա: Համահայկական բանկի գործունեության առաջին տարվա համար ներդրումային գործունեության ծրագրի ներկայացման հետ կապված հարցերը կարգավորվում են սույն օրենքի անցումային դրույթներով:

4. Համահայկական բանկը մինչեւ հաջորդ տարվա ապրիլի 1-ը լիազոր մարմին է ներկայացնում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծրագրի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, որը լիազոր մարմինը քննարկում եւ անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում Համահայկական բանկին, եւ այդ առաջարկությունները արտացոլվում են Համահայկական բանկի հաջորդ տարվա գործունեության ծրագրերում եւ դրանց վերաբերյալ հաշվետվություններում:

Հոդված 8. Հաշվապահական հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունն ու արտաքին աուդիտը

1. Համահայկական բանկը հաշվապահական հաշվառումը վարում եւ ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին եւ միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան:

2. Յուրաքանչյուր տարի Համահայկական բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Համահայկական բանկը պետք է ներգրավի օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Համահայկական բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ